ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 794-Ա

«16» հուլիսի 2025 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 37-ՐԴ ՓՈՂՈՑ 28 ՀԱՍՑԵԻ 08-004-0108-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անուշ Հարությունի Գասպարյանը (ծնված 1951 թվականի հունիսի 22-ին) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ բաժնային սեփականության իրավունքով իր ընտանիքի անդամներին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ազատան բնակավայրի, 37-րդ փողոց, 28 հասցեի 0,337 հեկտար մակերեսով, 08-004-0108-0021 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Բաժնային սեփականության իրավունքով Անուշ Հարությունի, Հովհաննես, Նաիրա և Մերի Սիմավոնի Գասպարյաններին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ազատան բնակավայրի, 37-րդ փողոց, 28 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 251,04 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, նկուղը, աստիճանավանդակը, ավտոտնակը, անասնաշենքը և պարիսպը կառուցվել են 1965 թվականից 1995 թվականը (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը): Նույն հողամասի վրա ինքնակամ կառուցված 3,61 քառակուսի մետր մակերեսով պարիսպը կառուցվել է 2018 թվականին (2001 թվականի մայիսի 15-

463

ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024LFTTZ4 ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի բ) ենթակետի և 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների սահմանված չափը՝ որը Ազատան բնակավայրի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է և հիմք ընդունելով Անուշ Հարությունի Գասպարյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ազատան բնակավայրի, 37-րդ փողոց, 28 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 251,04 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, նկուղը, աստիճանավանդակը, ավտոտնակը, անասնաշենքը և պարիսպը ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա ինքնակամ կառուցված 3,61 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական՝ սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված պարսպի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 6000 դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,1209 գործակիցը:

4. Շինությունների օրինականացման համար հաշվարկված ընդհանուր գումարը կազմում է 2619 (երկու հազար վեց հարյուր տասնինը) դրամ:
5. Նույն հողամասի վրա գտնվող 2005 թվականին կառուցված 12,39 քառակուսի մետր ներքին մակերեսով հացատունը թողնել ինքնակամ, որի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները և ռիսկերը կրում է հողամասի բաժնային սեփականատերերը:
6. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 4-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի բաժնային սեփականատերերը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
8. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«16» հուլիսի 2025 թվական
գյուղ Ախուրյան